Սաթենիկ Ավագի Տեփանյանի՝ «Անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիոնալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրում»(բնօր-ը ռուսերեն) «Взаимосвязь идентичности, толерантности и экзестенциональной наполненности личности из моно и полиэтнической среды» թեմայով ԺԹ. 00. 01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ

Կ Ա Ր Ծ ի Ք

Համաշխարհային տնտեսական, ռազմաքաղաքական, ժամանակակից զարգացումները ժողովուրդների համակեցության նկատմամբ առաջադրում են հարաբերությունների կառուցման նորովի մոտեցումներ: Մյուս կողմից՝ ազգային միատարր և բազմատարր միջավայրերում գոյություն ունեցող միջմշակութային փոխակերպումներն ու տնտեսական մրցակցությունը իրենց մեջ պարունակում են տեսանելի ու քողարկված լուրջ սպառնալիքներ: Դրանք դրսևորվում են փոքրաթիվ ժողովուրդների լեզվական, մշակութային, ազգային արժեքների անտեսման, ազգային ինքնության անտեսման միջնորդավորված, հաճախ նաև քողարկված ձևերով, սոցիալ-մշակութային, պատմական արժեքների ակնհայտ յուրացման ձևերով, անձի ինքնության, ազգային մտածելակերպի մտածված արհամարհման, ինքնատիպության դրսևորումների միտումնավոր ու միջնորդավորված լոզման ու առաջավոր գաղափարների ընդհանրացման, նրանց առաջընթացի խաթարման, միմյանց նկատմամբ անհանդուրժողականության, ազգային խտրականության և բազմաթիվ այլ ձևերով:

Սաթենիկ Ավագի Տեփանյանի ատենախոսական աշխատանքի արդիականությունը կայանում է նրանում, որ այն ուղղված է բացահայտելու ազգային միատարր և բազմատարր միջավայրում անձի նույնականության էկզեստենցիոնալ ամբողջականության հոգեբանական փոխկապակցվածության ազդեցությունը նրա հանդուրժողականության ձևավորման վրա: Չնայած, որ վերջին տասնամյակներին հոգեբանական այս հիմնախնդիրը գտնվում է բազմաթիվ հայրենական, արևմտյան մտածողների ուշադրության կենտրոնում, այնուամենայնիվ այն դեռևս լիարժեք լուսաբանված չէ և ունի բազմակողմանի հետազոտությունների կարիք: Մյուս կողմից՝ մեր

երկու ժողովուրդների բազմադարյան բարեկամությունն ու խաղաղ գոյակցությունը ժամանակի ընթացքում հանգեցրել է կենսակերպի կառուցման շատ ընդհանրությունների, որում դժվար է առանձնացնել, թե էթնիկական որ խմբին է պատկանում այս կամ այն արժեքը, ավանդույթը, ազգային մենաշնորհ հանդիսացող ապրելակերպի ձևերը և այլն: Ընդհանուր սոցիոմշակութային հանրության մեջ ապրող Հայ և ռուս ուսանողների հանդուրժողականության կախվածությունը ազգային միատարր և բազմատարր միջավայրից հոգեբանական հիմնախնդրի ուսումնասիրությունը հնարավորություն կտա երկու երկրների ուսումնական հաստատությունների ուսանողների համար մշակելու բազմակողմանի համագործակցության ծրագրեր, ինչպես նաև ժամանակին կանխարգելելու հավանական խնդիրների առաջացման պայմանները:

Սաթենիկ Ավագի Տեփանյանի ատենախոսական աշխատանքը բաղկացած է ներածությունից, տեսական խնդիրների մեկնաբանման երկու գլուխներից, ինչպես նաև էքսպերիմենտալ հետազոտական երրորդ գլխից, որն ամփոփվում է հետազոտությունների արդյունքների հիման վրա արված հիմնարար եզրակացություններով: Օգտագործվել են 258 գրական աղբյուրներ, որոնցից 2-ը հայերեն, 160-ռուսերեն և 96 օտարալեզու աղբյուրներ: Հետազոտության արդյունքները արտացոլված են 17 նկարների և 18 աղյուսակների տեսքով, որոնցում տեղ գտած փոփոխականների վերլուծությունները արտացոլվում են հիմնական արդյունքների քննարկումներում: Աշխատանքում տեղ են գտել նաև 4 հավելվածներ, որոնք համալրում, ամբողջականացնում են հետազոտական աշխատանքների գիտական պահանջները:

Սաթենիկ Տեփանյանի ատենախոսական աշխատանքի ներածական բաժինը իր մեջ ամփոփում է հիմնախնդրի ուսումնասիրության գիտական պահանջների ձևակերպումները, որոնք իրականացվել են գրագետ գիտական լեզվով, գիտական աշխատանքներին ներկայացվող պահանջներին համապատասխան: Տեսական վերլուծություններն ու հետազոտական գործնթացների իրականացման ռազմավարությունը հիմնավորվում է համաշխարհային ճանաչողություն ունեցող գիտնականների առաջավոր գաղափարներով: Աշխատանքների հայեցակարգային հիմքում ընկած են Ա. Բերբերյանի, Գ. Սոլդատովայի, Ս. Ռիժովայի, Ն. Լեբեդեվայի, Տ. Ստեֆանենկոյի, Օ. Տուչինայի, Գ. Կոիսկոյի, Վ. Ֆրանկլի, Է. Էրիքսոնի, Ջ. Մարսիայի, Ա. Լենգլեի և այլոց առաջավոր գաղափարները: Ատենախոսական աշխատանքի հիմնական

և մասնավոր վարկածները ուրվագծում են հետազոտական աշխատանքների իրականացման պահանջները, նպատակի, խնդիրների հիմնարար ուղղվածությունն ու դրանց իրականացման հեռանկարները: Հետազոտության մեթոդների մարտկոցը աչքի է ընկնում առաջադրվող հիմնախնդրի լուծման գիտական պահանջների համապատասխանելիությամբ, որում ներառված է նաև մաթեմատիկական հաշվարկների իրականացման վիճակագրական մեթոդների կուռ համակարգ: Այն իր նպատակահարմարությամբ և ստացված արդյունքների ճշգրտությամբ հնարավորություն է ստեղծում մաթեմատիկայի չափելիության շրջանակներում իրականացնելու համապատասխան եզրակացություններ, հետևություններ և գիտագործնական առաջարկություններ: Հետազոտություններն իրականացվել են փուլային եղանակով՝ համապատասխան առաջադրանքների իրականացման նպատակահարմարության հերթականության: Հիմնարար գիտական ձևակերպումներով ներկայացված են հետազոտության օբեկտը, առարկան, պաշտպանության ներկայացվող դրույթները, գիտական նորույթը, հետազոտության տեսական, գործնական նշանակությունը, ստացված արդյունքների հուսալիության և հավաստիության գիտական հիմնավորումները:

Ս. Տեփանյանի ատենախոսական աշխատանքի տեսական և գործնական հետազոտությունների արդյունքները հրատարակվել են ինդեքսավորված SCOPUS միջազգային գիտական հանդեսում, արտասահմանում հրատարակվող միջազգային գիտական ամսագրերում, ինչպես նաև << գիտպետկոմի կողմից հավաստագրված գիտական ժողովածուներում: Հեղինակի կողմից հրատարակված 9 հոդվածները հիմնավորվում են բարձր գիտականությամբ և ստացված արդյունքների մշակման ճշգրտությամբ, անհրաժեշտ եզրակացություններով: Հոդվածներն իրենց կառուցվածքային և բովանդակային բնութագրերով լիարժեք արտացոլում են ատենախոսական աշխատանքի տեսական և հետազոտական խնդիրների լուծման բոլոր պահանջները:

Ս. Տեփանյանի ատենախոսական աշխատանքի տեսական խնդիրների լուծման առաջին «Անձի ինքնության և հանդուրժողականության տեսամեթոդաբանական հիմունքները» գլխում հեղինակը մանրամասն հմուտ վերլուծությունների շնորհիվ անդրադառնում է ժամանակակից գիտնականների կողմից «ինքնություն» և

«հանդուրժողականություն» հասկացությունների հոգեբանական մեկնություններին, հոգեբանական տարբեր դպրոցների (հոգեվերլուծական, էկզիստենցիոնալ, բիհեվիորիստական, կոգնիտիվ և այլն) գիտնականների կողմից դրանց մեկնաբանման առանձնահատկություններին (Ա. Բերբերյան, Վ. Տուչինա, Զ. Ֆրեյդ, Ա. Բեռնս, Մ. Շերիֆ, Ու. Ջեյմս, Է. Էրիքսոն, Կ. Ռոջերս, Ռ. Ֆոգելսոն և այլք): Այնուհետև անդրադարձ է արվում «ազգային ինքնության», «հանդուրժողականության» անձնային, ինչպես նաև էթնիկական ձևերի վերաբերյալ նրանց հայացքների հոգեբանական վերլուծություններին: Համեմատական վերլուծությունների շնորհիվ վեր են հանվում անձի էթնիկական նույնականացման սոցիալ-հոգեբանական, բիոէթնիկական փոխակերպումները, ընտանիքի, էթնիկական առանձին խմբերի ազդեցության պատճառականությունները, ձևափոխությունների մեխանիզմները և այլն: Հեղինակը կարևոր մեկնություններ է կատարում նաև խորհրդային դպրոցի հեղինակների աշխատությունների վերաբերյալ, որոնք հիմնախնդիրը դիտարկում են որպես ինքնագիտակցություն և դրա դրսևորման տարբեր մեկնաբանումներ, որպես դրանց սոցիալ-հոգեբանական, փիլիսոփայական ընկալման առանձնահատկություններ (Լ. Վիգոտսկի, Ա. Լեոնտեվ, Ա. Սպիրկին, Ս. Կոն, Ա. Ճարոֆոստով և այլք):

Հեղինակի կողմից հիմնահարցի բազմակողմանի ուսումնասիրությունները առընչվում են նաև հայրենական և արևմտյան գիտնականների կողմից հանդուրժողականության առանձնահատկությունների, դրանց հոգեբանական բնութագրերի վերաբերյալ իրականացվող մեկնաբանումներին: ՈՒսումնասիրություններում շեշտավորվում է այն մտայնությունը, որ չնայած հանդուրժողականության վերաբերյալ գոյություն ունեցող բազմաթիվ ուսումնասիրությունների առկայությանը, այնուամենայնիվ միասնական ինտեգրատիվ բնութագրում գոյություն չունի: Սակայն միևնույն հարթության վրա բազմաթիվ հետազոտողների կողմից ընդունվում է այն հանգամանքը, որ հանդուրժողականությունը հանդիսանում է սոցիալ-հոգեբանական, հոգեֆիզիոլոգիական, բարոյափիլիսոփայական, սոցիալ-իրավական բարդ կառուցվածքային ամբողջական որակ, որը իր մեջ ներառում է բազմաթիվ բաղադրամասեր: Այն հանդիսանում է անձի , խմբերի ակտիվ դիրքորոշում և նրանց կողմից ուրիշներինը ընդունելու, հանդուրժելու հոգեբանական պատրաստակամություն: Այնուհետև ներկայացվում են ժամանակակից ուսանող երիտասարդության շրջանում դիտարկվող հոգեբանական նորագոյացությունները,

հիմնախնդրի տարիքային, սեռային, էթնիկական առանձնահատկությունները, նրանց մտավոր զարգացման, ժամանակակից համամարդկային արժեքների նկատմամբ դրսևորվող վերաբերմունքը, կարիերայի, մասնագիտական աճի ձգտման, կայացման ձգտումները և այլն: Մասնագիտական վերլուծություններում առանձնահատուկ ուշադրություն են դարձվում տարբեր ոլորտներում արդեն ապրելակերպ հանդիսացող մրցակցության ձևերին, ուսանող երիտասարդների բազմակողմանի պատրաստվածության պահանջներին, (բազմակողմանի տեղեկացվածություն, լեզուների իմացություն, քաղաքական գրագիտություն, իրավական օրենքների, նորմերի տիրապետում և այլն):

Ատենախոսական աշխատանքի երկրորդ, տեսական հարցերի ուսումնասիրման գլխում աշխատանքներն ուղղված են միատարր և բազմատարր միջավայրի երիտասարդների անձի էկզիստենցիոնալ ամբողջականության հիմնահարցի ուսումնասիրություններին: Հեղինակը առաջնահերթության կարգով ներկայացնում է էկզիստենցիոնալ հոգեբանության հայեցակարգային հիմքերը, (պատմական, բնագիտական, հոգեբանական, փիլիսոփայական, արվեստի, գրականության, մշակույթի և այն), որոնք իրենց բնագավառների տեսանկյունից բնութագրում և ամբողջականացնում են անձի էկզիստենցիոնալ խնդիրների փոխկապակցվածության դիալեկտիկան, հիմնախնդրի բովանդակային և իմացաբանական կողմերի ուսումնասիրվածության գիտական ժառանգությունը (Հոմերոս, Պլատոն, Սոկրատ, Սերվանտես, Դանթե, Դ. Դոստոևսկի, Ի. Յալոմ, Կ. Յասպերս, Ժ. Սարտր, Է. Ֆրոմմ, Վ. Ֆրանկլ, Ա. Բերբերյան և ուրիշներ): Այնուհետև հեղինակի կողմից անդրադարձ է արվում երիտասարդների անձի էկզիստենցիոնալ բնութագրերին վերաբերվող հետազոտությունների հոգեբանական վերլուծություններին: Դրանցում հոգեբանական վերլուծության են ենթարկվում ուսանող երիտասարդների կողմից կյանքի իմաստի, կյանքի և մահվան, կեցության, երջանկության, իշխանության, ընտանիքից, ծնողներից առանձնացման և այլ հիմնախնդիրների ընկալման անձնային պատկերացումները: Հեղինակի ուսումնասիրություններում (Ա. Բերբերյան, Ս. Տեփանյան 2021) կարևորվում են ճգնաժամային պայմաններում (կորոնավիրուսի համաճարակ) հայ ուսանողների անձի «Ես» պատկերացումների բաղադրիչների և էկզիստենցիոնալ բնութագրիչների փոխկապակցվածության բնութագրականները, ինչպես նաև ճգնաժամային պայմաններում անձի ամբողջականության պահպանման բնութագրիչների, դրանց փոփոխությունների խնդիրները միատարր և բազմատարր

միջավայրերում: Ուսումնասիրություններում արտացոլված են նաև տարբեր դպրոցների գիտնականների առաջավոր գաղափարները, որոնցում մեկնաբանվում են ազգային միատարր և բազմատարր միջավայրերում ուսանող երիտասարդների հարմարման, էկզիստենցիոնալ անվտանգության, երջանկության վերաբերյալ պատկերացումների, կյանքի իմաստավորման սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, ինքնահաստատման ու ինքնադրսևորման գործընթացների կառավարման անձնային առանձնահատկությունները: Հոգեբանական վերլուծությունների արդյունքում մեկնաբանվում են նաև ժամանակի երեք դրսևորումներում (անցյալ, ներկա, ապագա) երիտասարդների առջև ծառացած խնդիրների արդյունավետ լուծման սոցիալ-հոգեբանական մեխանիզմները, գործունեության արդյունավետության ապահովման ստեղծարար մոտեցումները, անձնային հաջողությունների, նվաճումների ձեռքբերման ներքին մեխանիզմները:

Ս. Տեփանյանի վերլուծություններում անդրադարձ է արվում հայերի և ռուսների անձի էթնոհոգեբանական առանձնահատկությունների հիմնախնդիրներին: Վերլուծությունների միջոցով պարզաբանվում են հայկական և ռուսական միջավայրերում սովորող ուսանողների աշխարհընկալման, սոցիալական տարբեր միջավայրերում նրանց վարքի դրսևորման, ինչպես նաև տարբեր արժեհամակարգերի նկատմամբ նրանց վերաբերմունքների դրսևորումներին: Դիտարկվում են նաև ազգային ինքնագիտակցության խնդիրներին վերաբերվող մոտեցումների ուսումնասիրությունները, վեր են հանվում էթնոսի, լեզվի, մշակույթների, ազգային ավանդույթների, տարածքային, տնտեսական և այլ արժեքների նկատմամբ նրանց վերաբերմունքն ու դիրքորոշումների բազմազանությունները: Հեղինակը դրանցում կարևորում է այն առաջնահերթությունները, որոնք բնորոշ են այս կամ այն էթնոսին, ինչպես նաև երիտասարդների կողմից էթնիկական խմբի անդամության, պատկանելության նրա սուբյեկտիվ զգացումներն ու ընկալումները: Այնուհետև բնութագրվում են մոնոէթնիկական և բազմազգ միջավայրերի առանձնահատկություններն ու դրանց ազդեցությունը անձի պատկանելության և արժեհամակարգի ընկալումների, տարբեր ազգերի ներկայացուցիչների անձանց հետ համագործակցության ու ինտեգրման գործընթացների վրա: Այնուհետև առանձնացվում են էթնոսին բնորոշ (ինչպես հայերի, այնպես էլ ռուսների) դինամիկ և ստատիկ կառուցվածքային բաղադրամասերի հոգեբանական բնութագրերի վերլուծությունները,

տրվում դրանց ձևավորման էթնիկական, պատմամշակութային սոցիալ-հոգեբանական, աշխարհագրական, տնտեսական գործոններով պայմանավորված հիմնավորումները:

Ս. Տեփանյանը երիտասարդների անձնային բնութագրերի ու ազգային առանձնահատկությունների ձևավորման գործընթացում առանցքային տեղ է հատկացնում ռուսական Ուղղափառ և հայկական Առաքելական Սուրբ եկեղեցիների գործունեությանը, որոնք դարերի ընթացքում կարևոր նշանակություն են ունեցել ազգային դիմանկարի ձևավորման գործում: Ատենախոսական աշխատանքի տեսական երկու գլուխներն էլ ամփոփվում են բարձր մասնագիտական վերլուծությունների հիման վրա արված հետաքրքիր եզրակացություններով, որոնք ընդգծում են թեմայում առաջադրած հիմնհարցերի լուծման տեսական պահանջների լիարժեք իրականացումը:

Ս. Տեփանյանի հետազոտական աշխատանքի երրորդ գլուխը նվիրված է միատարր և բազմատարր միջավայրերի անձանց նույնականության, հանդուրժողականության և էկզիստենցիոնալ ամբողջականության փոխկապակցվածության փորձարարական հետազոտությունների նկարագրմանը: Հետազոտություններն իրականացվում են փուլային եղանակով, որոնցում ըստ առաջնահերթության իրականացվել են տեսական խնդիրների ուսումնասիրությունները, մշակվել և ձևակերպվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, աշխատանքի նպատակն ու խնդիրները, հետազոտության հիմնական և միջանկյալ հիպոթեզները: Երկրորդ փուլում իրականացվել են հետազոտական աշխատանքների իրականացման ռազմավարությունը, մեթոդների ընտրության և տեղայնացման գործընթացները: Երրորդ փուլում իրականացվել են տարբեր միջավայրերում ապրող երիտասարդների նույնականության, հանդուրժողականության և էկզիստենցիոնալ ամբողջականության փոխկապակցվածության հիմնախնդրի բուն հետազոտական աշխատանքները: Այնուհետև իրականացվել են հետազոտության արդյունքների վերլուծությունը, եզրակացությունների ձևակերպումը: Հինգերորդ փուլում իրականացվել են առաջարկությունների, հանձնարարականների մշակումն ու դրանց առաջադրումը: Հետազոտություններն իրականացվել են հայկական և Ռուսաստանի ԲՈՒՀ-երում սովորող երիտասարդներից և աղջիկներից ընտրված համակազմերի հետ, որոնց հետազոտության արդյունքների մշակումներն իրականացվել են հուսալի մաթեմատիկական վիճակագրական մեթոդների միջոցով: Այնուհետև հեղինակի կողմից ներկայացվում են

համակազմերի ազգային, տարիքային, սեռային, լեզվական և այլ բնութագրականները, որոնց քանակական տվյալները զուգակցվում են համապատասխան նկարների տեսքով: Հետազոտության արդյունքների մանրակրկիտ վերլուծությունների շնորհիվ մեթոդ առ մեթոդ մեկնաբանվում են ստացված տվյալների վիճակագրությունը, դրանց հոգեբանական նշանակության բնութագրերը: Մասնագիտական հմուտ վերլուծություններում մեկնաբանվում են խմբերում դրանց անձնային, սեռային, ազգային և այլ գործոններով պայմանավորված պատճառականությունները, դրանցում դիտարկվող օրինաչափություններն ու բացառությունները: Հետազոտությունների արդյունքների տեսանելիության ու առանցքային գործոնների ընկալման նպատակահարմարության պահանջներից ելնելով, հեղինակը տարբեր երևույթների վիճակագրական հաշվարկների արտահայտվածությունները ներկայացրել է գիտական լուրջ հիմնավորումներով: Հետազոտության արդյունքում տարբեր մեթոդներից ստացված արդյունքների վերլուծությունները, հոգեկան երևույթների մեկնաբանման հիմնավորումները, փոփոխականների կորրելացիոն կապերի արտահայտվածության դրսևորումները արտացոլված են մատչելի հիստագրամների, նկարների, աղյուսակների տեսքով: Մեթոդ առ մեթոդ ներկայացվող Էքսպերիմենտալ հետազոտության վերջնարդյունքները, դրանց մանրակրկիտ վերլուծությունները ընդգծում են հեղինակի մասնագիտական բարձր գիտելիքները, նրա կողմից նյութի տիրապետման և հետազոտության արդյունքների մատուցման գիտական բարձր մշակույթը: Էքսպերիմենտալ հետազոտություններն ավարտվում են հինգ եզրակացություններով և ընդհանուր հետազոտություններին վերաբերվող հետևություններով: Աշխատանքում տեղ են գտել նաև չորս հավելվածներ, որոնք լրացնում և ամբողջականացնում են հետազոտական աշխատանքների իրականացման բոլոր պահանջները:

Ատենախոսական աշխատանքին կից ներկայացվող սեղմագիրը իր կառուցվածքային և բովանդակային բնութագրերով, դրույթների ձևակերպման պահանջներով, գիտական խնդիրների մեկնաբանման հնարավորություններով լիովին համապատասխանում է ատենախոսության մեջ լուծված խնդիրների բոլոր պահանջներին: Հայեցակարգային բոլոր դրույթները ձևակերպված են գրագետ, գիտական պահանջներին համապատասխան:

Չնայած որ աշխատանքը իրականացվել է ատենախոսություններին ներկայացվող գիտական պահանջների շրջանակներում, այնուամենայնիվ ունենք որոշ դիտողություններ, որոնք կուզեինք նշել:

1. Կարծում ենք, որ ազգային միատարր և բազմատարր միջավայրում անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիոնալ ամբողջականության փոխկապակցվածության հիմնախնդրի ուսումնասիրության գործընթացում բաց է թողնված խնդրո առարկայի վերաբերյալ հետազոտվողների մոտիվացիոն դիրքորոշումային, ինքնության և ինքնուրույնության (այս կամ այն երկրի քաղաքացի լինելու, անձի ընդհանուր և հոգեբանական անվտանգության, ապահովության զգացման և այլն) գործոնային բաղադրամասերի հոգեբանական դրվածքը:
2. Կարծում ենք, որ աշխատանքը կշահեր, եթե ուսումնասիրվերին նաև Հայաստանի դեպքում միատարր միջավայրում ապրող ազգային փոքրամասնություն հանդիսացող մեր եղբայրների (հույներ, ասորիներ, եզդիներ, քրդեր,) ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիոնալ ամբողջականության փոխկապակցվածության հիմնախնդրի դրվածքը, ինչը կամբողջականացներ հիմնախնդրի ուսումնասիրվածության բազմակողմանիությունը:
3. Կարծում ենք հեղինակի կողմից լիարժեք ուսումնասիրված չեն հիմնախնդրի վերաբերյալ հայ հեղինակների աշխատանքները, առավել ևս այսպիսի աշխատանքի ներկայացման դեպքում: Համոզված ենք, որ դրանով կարտացոլվեր նաև այս ոլորտում հայ մյուս հեղինակների գիտական ներդրումները:

Սակայն պետք է նշեմ, որ կատարված դիտարկումները բոլորովին չեն ստվերում ատենախոսության գիտական արժեքը, քանի որ այն իր կառուցվածքով, լուծված խնդիրների հիմնարարությամբ և բովանդակությամբ լիարժեք համապատասխանում է թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին:

Եզրակացություն

Սաթենիկ Ավագի Տեփանյանի՝ «Անձի ինքնության, հանդուրժողականության և էկզիստենցիոնալ ամբողջականության փոխկապակցվածությունը ազգային միատարր և

բազմատարր միջավայրում» (բնօր-ը ռուսերեն) «Взаимосвязь идентичности, толерантности и экзестенциональной наполненности личности из моно и полиэтнической среды» թեմայով ԺԹ. 00. 01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածուի աստիճանի հայցման ատենախոսական աշխատանքը իր կառուցվածքով և բովանդակությամբ հանդիսանում է ինքնուրույն, ավարտուն հետազոտություն: Այն լիովին համապատասխանում է ատենախոսություններին ներկայացվող բոլոր պահանջներին և ՀՀ գիտպետկոմի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակը՝ Սաթենիկ Ավագի Տեփանյանը արժանի է «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ իր կողմից հավակնած գիտական աստիճանին:

Հոգեբանական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր՝ Մ. Մկրտումյան

Մասնագետի (Մկրտ Մկրտումյանի) ստորագրության իսկությունը
հաստատում եմ

Խ. Աբովյանի անվան հայկական պետական
մանկավարժական համալսարանի գիտքարտուղար՝ Ռ. Թադևոսյան

2026թ